# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրում կրթահամալիր կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

**19.11. 2024թ.** **Փոքր Մասրիկ բնակավայր**

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Ռուզան Մակինյանը,
- Վարդենիս համայնքի ղեկավարի օգնական՝ Ալիկ Եղիազարյանը,
- Փոքր Մասրիկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Սարգիս Նշանյանը,
- Տարածքային զարգացման հիմնադրամի մասնագետ՝ Սոնա Գևորգյանը,
- «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Խաչատուր Բուդումյանցյանը,
- Փոքր Մասրիկ բնակավայրի դպրոցի տնօրենը՝ Արմեն Հովհաննիսյանը և բնակիչները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2024թ. նոյեմբերի 19-ին ժամը 12:00-ին Վարդենիս համայնքի Փոքր Մասրիկ բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Փոքր Մասրիկ բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Ռուզան Մակինյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու համար: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակում կատարելիս և հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը նախաձեռնողի կողմից լիազորն մարմին մուտք լինելուց հետո, օրենքով և կառավարության Որոշման պահանջներին համապատասխան նշանակվել է հանրային լսում: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոն:

Այնուհետև Փորձաքննական կենտրոնի մասնագետը **Ռուզան Մակինյանը** ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, թե ՇՄԱԳ հաշվետվությամբ ինչ է նախատեսվում իրականացնել, ներկայացրեց կառուցապատման տեխնիկական ցուցանիշները՝ նախագծի հետ համեմատելու և տվյալները ճշգրտելու նպատակով, ինչպես նաև շինհրապարակի կազմակերպման աշխատանքները: Փորձագետը ներկայացրեծ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված ազդցությունների մեղմման վերաբերյալ նախատեսված միջոցառումները մասնավորապես՝ փոշենստեցման, շինհրապարակում անիվների լվացման հարթակի, աշխատանքների ավարտից հետո տարածքի բարեկարգման և կանաչապատման և այլնի վերաբերյալ:

**Ռուզան Մակինյանը** հարց բարձացրեց նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ:

**Փոքր Մասրիկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Սարգիս Նշանյանը,** նշեց, որ բնակավայրի ջրամատակարարումն իրականացվում է խորքային հորից, որտեղից նաև նախատեսված է իրականացնել կրթահամալիր ջրամատակարարումն:

**Ռուզան Մակինյանը** հարցրեց արդյոք ջուրը կբավարարի բնակավային և դպրոցին:

**«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Խաչատուր Բուդումյանը պատասխանեց**, որ կրթահամալիրի նկուղային հարկում նախատեսված են ջրի երկու ռեզերվուր և ջուրն այնտեղ կլցվի գիշերային ժամերին, ինչը չի խանգարի բնակավայրի ջրամատակարարմանը:

**Ռուզան Մակինյանը** հարցրեց կրթահամալիրի ջրահեռացումն ինպես է կազմակերպվելու:

**Խաչատուր Բուդումյանը պատասխանեց**, որ կոյուղու համար նախատեսված է կենսաբանական մաքրման կայան, որտեղից կոյուղաջրերը մաքրման ենթակվելուց հետո կմղվեն ցամաքուրդային հոր:

**Փոքր Մասրիկ բնակավայրի դպրոցի տնօրեն Արմեն Հովհաննիսյանը** հարց բարձրացրեց կրթահամալիրի տարածքի հարևանությամբ գործող հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի երթևեկության անվտանգությունն ապահովող տարրերի վերաբերյալ՝ ճանապարհային նշանների, լուսացույցների, ազդանշանային սյուների, հորիզոնական և ուղղաձիգ գծանշումները և այլն.

**Խաչատուր Բուդումյանը պատասխանեց**, որ կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջանակներում «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ն կապահովվի ճանապարհային նշանները և գծանշումները:

**Ռուզան Մակինյանը** հավելեց, որ ավտոմոբիլային ճանապարհի երթևեկության անվտանգությունն ապահովում է ճանապարհները տնօրինող կազմակերպությունը, որ համար պետք դիմել համապատասխան կազմակերպությանը:

**Ռուզան Մակինյանը** առաջարկեց շինարարական աղմկահարույց աշխատանքների ընթացքում աշխատավայրում իրականացնել աղմուկի և թրթռի գործիքային չափում, առաջարկեց նաև, որ շինարարական հրապարակը կարելի է սահմանազատել 2 մ բարձրությամբ ոչ մետաղական ցանկապատով՝ ամրություն ունեցող պոլիէթիլային թաղանթով, ինչը կարող է հանդիսանալ նաև աղմկակլանիչ էկրան:

Առաջարկը ստացավ դրական արձագանք և ընդունվեց կազմակերպության ներկայացուցիչների կողմից:է

**Ռուզան Մակինյանը հավելեց, քանի որ նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են Կարմիր գրքյան բուսատեսակները, կենդանատեսակները, ինչպես նաև պատմության և բնական հուշարձանները :**

Հանրային լսումներում այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:
Հանրային լսումներն ամբողջությամբ լուսանկարվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Փոքր Մասրիկ վարչական շրջանի աշխատակցի կողմից:

Արձանագրությանը կցված է հանրային լսումների մասնակիցների ցանկը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան

«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Խաչատուր Բուդումյան